«Երևանի Լեոյի անվան համար 65 ավագ դպրոց» ՊՈԱԿ

Հետազոտական աշխատանք

Թեմա

Լեոնարդո դա Վինչիի <<Արծվի պատգամը>> ստեղծագործության ուսուցման առանձնահատկություններն ու մեթոդիկան

Կատարող՝ Ա. Նազարեթյան

Ղեկավար՝ Ա. Աբելյան

Երևան **2022**

Երկու խոսք

<< Կյանքը տրված է վայելելու, բարիքներից օգտվելու և սիրելու համար: Սերը պարգև է, որը տրվում է բոլորին: Պետք է կարողանալ պայքարել հանուն երջանկության և կյանքի յուրաքանչյուր րոպեն դարձնել անկրկնելի ու հիշարժան>>:

Լեոնարդո դա Վինչի 

Վերածննդի դարաշրջանի իտալացի գեղանկարիչ, քանդակագործ, ճարտարապետ, երաժիշտ ու գրող Լեոնարդո դա Վինչին ծնվել է 1452 թվականի ապրիլի 15-ին: Նա եղել է նաև գրող, մաթեմտիկոս, մեխանիկ, քաղաքագետ և գյուտարար: 1466թ. ընտանիքի հետ տեղափոխվել է Ֆլորենցիա, որտեղ 1469-1478թթ. աշակերտել է ժամանակի հայտնի նկարիչ Անդրեա դել Վերոկիոյին:

Նա առաջինն է բուսաբանությունը դիտել որպես ինքնուրույն կենսաբանական գիտություն, տվել բույսերի արևամետության, արմատներում նյութերի շարժման նկարագրությունը: Սակայն տեխնիկայի ցածր մակարդակի պատճառով չի կարողացել իրականացնել իր նորարարական մտահղացումները:
Մահացել է 1519թ. մայիսի 2-ին:
Լեոնարդո դա Վինչին համարվում է այդ հսկաներից առաջինը, որը եղել է մեծ կարողություններով օժտված մարդ: Նա հաջողության է հասել թե գիտության, թե արվեստի բնագավառում՝ նկարչությունը, ճարտարապետություն, քանդակագործություն, ինչպես նաև եղել է ինժիներ, բժիշկ, գիտնական:

Նրա համապարփակ, գիտական և գեղարվեստական գործունեության նշանակությունը պարզ դարձավ միայն այն ժամանակ, երբ հետազոտվեցին Լեոնարդոյի թողած ձեռագրերը: Նրա գրառումներում ու կտավներում ակնհայտ են գեղանկարչի հանճարեղ մտքի փայլատակումները գիտության ու տեխնիկայի ամենատարբեր բնագավառներում:Նկարչի համար բնությունն ու մարդն անբաժանելի են, նրա կերպարները նույնպես բնապատկերի մեջ են և ստեղծում են յուրահատուկ հուզական միջավայր: Նկարիչը, չհանդուրժելով անարդարությունը, զժտություններն ու անմիաբանությունը, իր ողջ կյանքում ստիպված է եղել թափառել:

Արվեստը Լեոնարդոյի համար աշխարհաճանաչման միջոց էր: Նրա շատ ուրվանկարներ գիտական աշխատանքի լուսաբանումներ են, և միաժամանակ դրանք բարձրարվեստ ստեղծագործություններ են: Լեոնարդոն ինքը մարմնավորում էր գեղանկարիչ-գիտնականի , մտածողի նոր տիպար, որը զարմացնում է իր հայացքների լայնությամբ, տաղանդի բազմակողմանիությամբ: Նրա փոքրածավալ գրական ստեղծագերծություններից յուրաքանչյուրը կյանքը սովորելու և սովորեցնելու մի փոքրիկ ճանապարհ է, որը տանում է մայրուղի: Ահա նրանցից մեկը՝ <<Արծվի պատգամը>> առակը: Միշտ էլ համոզված եմ եղել, որ առակները ասելիքը տեղ հասցնելու եզակի հնարավորություն են տալիս :

Լեոնարդո դա Վինչի <<Արծվի պատգամը>> բարոյախրատական բնույթի գրական ստեղծագործություն է, որտեղ այլաբանության միջոցով հեղինակը ներկայացնում է կյանքի և մահվան փիլիսոփայությունը: Իսկ այդ փիլիսոփայությանը հասնելու համար անհրաժեշտ է ձևավորել երկխոսության ազատ մթնոլորտ՝ նպատակ ունենալով հարցադրումների միջոցով կառուցել մի այնպիսի բուրգ, որի յուրաքանչյուր աստիճանը պիտի դառնա աշակերտի հոգեկերտվածքի նոր որակ՝ էլ ավելի խորը, շրջահայաց, զննող, վերլուծող, դիտարկող: Առակի ճիշտ մեկնաբանության և մատուցման վերջնարդյունքում մենք մեր աչքի առջև տեսնելու ենք բարոյական վեհ արժեքների ձգտող մեր աշակերտներին, որոնք կհասկանան ճիշտ ապրելու պատիվը ու կձգտեն դրան: Առակը հնարավորություն է տալիս, որ ուսուցիչը (անկախ տարիքային խմբից) իր սաներին սովորեցնի ապրելով ապրելու և ապրեցնելու ճանապարհը, ապացուցի, որ մահը դեռ վերջը չէ, այլ գործի և տեսակի անմահության խորհուրդն է այն, համոզի, որ արարելը և օրինակ դառնալը կյանքի մեծագույն նպատակն է, դասը, ցույց տա, որ քաղաքացիական կրթության անտեսանելի շեմը հենց արժևորելն է , իսկ խիզախումը՝ արժեք ստեղծելը :

Լեոնարդո դա Վինչիի <<Արծվի պատգամը>>

ստեղծագործության ուսուցման առանձնահատկություններն ու մեթոդիկան

Ուսուցման ժամանակակից բազմաթիվ ու բազմապիսի մեթոդներն ու հնարները ուսուցչին հնարավորություն են տալիս նյութի ուսուցումը դարձնել ավելի հետաքրքիր, բազմակողմանի ու տարողունակ: Նյութը պիտի նպաստի աշակերտի կարողությունների զարգացմանն ու հասցնի ցանկալի վերջնաարդյունքի:
Մեծ մտածող Լեոնարդո դա Վինչիի <<Արծվի պատգամը(կտակը)>> ստեղծագործությունը մեզ լիուլի տալիս է այդ բոլոր հնարավորությունները:

Դասը կարելի է սկսել **<<Մտագրոհ>>** մեթոդով՝ աշակերտներին ուղղելով հետևյալ հարցերը.

1. Ի՞նչ է պատգամը:

2. Ի՞նչ ստեղծագործություններ եք հիշում, որոնցում հանդիպել եք **պատգամ** բառը:

Աշակերտները, անշուշտ, կհիշեն Ս. Կապուտիկյանի <<Խոսք իմ որդուն>> բանաստեղծությունը կամ նրա՝ **<<Տղայիս>>** բանաստեղծության տողերը.

<<Մար՛դ եղիր, որդի՛ս, մա՛րդ մնա կյանքում. . . >>:

Այնուհետև ուսուցիչը կարդում է ստեղծագործությունը՝ այն բաժանելով մասերի:

Ուսուցչի կողմից տեքստի ընթերցումից հետո աշակերտները փորձելու են վերնագրել հատվածները՝ յուրաքանչյուրի համար փնտրելով և գտնելով բանալի բառերը :

Աշակերտները տեքստը բաժանում են 3 մասի՝

1. Արևի աչքերին նայողը,

2. Արծվի անմահությունը,

3. Արժանի հետնորդները:

Մաս 1-ին՝ **Արևի աչքերին նայողը**

Անառիկ ժայռերի մեջ ապրող անպարտելի ու անկոտրում արծիվը, որ երբեք չէր վախեցել նայել արևի աչքերին, զգաց իր մոտալուտ վախճանը: Եվ բնավ մահվան վախը չէր, որ անհանգստացրեց նրան. նա պիտի իմաստավորեր իր կյանքի վերջին րոպեները՝ իր զավակներին տալով հայրական պատգամը:

Բանալի բառեր՝

ուժ, հպարտ միայնություն, մեծություն, վախ, արև,տարիների հաշիվ, խիզախ հայացք, հինավուրց ճշմարտություն, պարտադրված հարգանք :

Այնուհետև յուրաքանչյուր հատվածի համար մշակվում են հարցեր, որոնց պատասխաններն ու քննարկումը աշակերտներին հնարավորություն կտան խորությամբ ընկալել և վեր հանել նաև այն, ինչը գրված չէ, բայց ամենակարևորն է և ուսանելին:

Հարցեր՝

1. Ինչու՞ էր մտահոգ արծիվը:
2. Ո՞րն էր զավակներին տրված պատգամի խորհուրդը:
3. Բոլոր մեծե՞րն են այդ խնդրի առջև կանգնում:
4. Արծիվն ինչու՞ էր սովամահ անում ձագերին:
5. Այս ստեղծագործությունն արդյոք ձեզ ստիպե՞ց խորհել կյանքի իմաստի մասին:
6. Ինչի՞ խորհրդանիշն է արևը:

Քննարկելով արծվի պատգամն իր որդիներին՝ աշակերտները պիտի վեր հանեն նրա խորին խորհուրդը՝ լինել հզոր, անվախ, նպատակասլաց, երբեք չվախենալ արևի այրող շողերից:

Թուլակամությունը պարտություն համարող արծիվը սպանել էր իր թույլ, անզոր ձագերին:

Այս հատվածն, իհարկե, կհուզի աշակերտին և գուցե կստիպի ըմբոստանալ:

Ուստի, ապահովելով նաև միջառարկայական կապը, կարելի է խոսել կենդանական աշխարհում մայրական բնազդի մասին, ասել, որ կան կենդանիներ, որոնց թվում՝ նաև արծիվները, որոնք ուտում կամ խեղդում են իրենց վատառողջ ձագերին: Այստեղ գործում է մյուս ձագերին պաշտպանելու, սերունդը պահպանելու բնազդը:

Արծվի մասին շատ հետաքրքիր փաստ է նաև այն, որ երբ նրանք զգում են, որ այլևս չեն կարող որս անել, բարձրանում են վեր՝ դեպի երկնքի անհունները, թևերը փակած՝ սլանում են ցած և կտուցը խփում կարծր քարերին, որ այն ջարդվի և հետո կրկին աճի: Սա արծվի՝ թռչունների արքայի ուժի, անվախության, խիզախության, դժվարություններից չընկրկելու և դրանք հաղթահարելով՝ նպատակներին հասնելու մի ցայտուն օրինակ է, որը պետք է հասկանա աշակերտը, հոգեպես և ֆիզիկապես դաստիարակվի այս վառ օրինակով, հասկանա, որ իր նպատակն իրագործելու համար պետք է աշխատի, պայքարի, հաղթահարի բոլոր խոչընդոտները:

Լսենք ևս 10 փաստ արծիվների մասին.

https://www.youtube.com/watch?v=0Fuqie3It2I

Ինչպե՞ս ապրել . սա է պատգամում հայր արծիվը: Աներկյուղ, աներեր, համարձակ, դժվարություններից չվախենալու և չխուսափելու խորհուրդ կա բազում ստեղծագործություններում: Դրանցից մեկը Պ. Սևակի <<Որդուս>> բանաստեղծությունն է, որ պետք է կարդալ աշակերտների համար և առաջարկել գտնել իմաստային ընդհանրությունները:

• Ա՜խ, մի՛ նվա։ Հայրդ երբեք չէր հանդուրժում նվաստողին. . .

Շատ ավելի լավ է, տղա՛ս, դառն արցունքով աչքդ ցողիր

Ու քո ճամփան շարունակիր։ Թո՛ղ որ լինի նա քարքարոտ,

Բայց քո հոգում եթե լինի բարու՛, լավի՛, սիրո՛ կարոտ,

Դու չես հոգնի, դու կքայլես, կբարձրանաս դու սարն ի վեր։

Դրա համար ոգի է պետք,դրա համար պետք չեն թևեր(Պ. Ս.)։

Իհարկե,կապույտ,անծիր երկինքը նախ և առաջ ազատության խորհրդանիշ է։ Այս համատեքստում պետք է հիշել Հովհ. Շիրազի <<Կյանքից թանկ բանը>> բանաստեղծությունը:

- . . . Թռի՛ր, սիրելի՛ս, ազատ ու վայրի,

  Թռի՛ր և ասա՛ ստրուկ աշխարհին,

  Թե ի՛նչն է թանկը կյանքից ավելի. . . (Հովհ. Շ.)։

Բանալի բառերի մեջ տեսնելով **վախ** և **պարտադրված հարգանք** բառերը՝ աշակերտները կխորհեն արծվի իմաստուն խոսքերի շուրջ. **<<Վախենալ քեզանից կկարողանաս ստիպել, սակայն ստիպողաբար հարգանք չես վայելի>>:**

Արծվի զավակները հասկացան, որ այդ հարգանքը կվաստակեն, եթե ապրեն արծվին վայել և հետևեն կյանքը խիզախումով ապրելու նրա խորհրդին:

Որպես կյանքի, հավերժության և ուժի խորհրդանիշ՝ պիտի անդրադառնալ նաև արևին:

Ուսուցչի օգնությամբ աշակերտները պիտի հիշեն դեպի արևը գնացող, արևին ապավինող գրական հերոսների:

Արևի խորհրդանիշը լավագույնս ներկայացնելու համար հրաշալի օրինակներ կարող են լինել Ավ. Իսահակյանի <<Աբու -Լալա Մահարի>> և Եղ. Չարենցի <<Ամբոխները խելագարված>> պոեմներից հետևյալ հատվածները.

- Դեպի արևը դարեր ու դարեր թռիր, սլացիր, ազնիվ քարավան,

  Նրա լուսեղեն, բոցեղեն գրկում, որ արևանամ և հավերժանամ(Ավ. Իս.):

- Աչքերն հառած հեռու՜-հեռու՜ն կարմիր վառվող արեգակին՝
  Արևավառ հեռուներում նրանք կռվում էին կրկին.
  Հոծ խմբերով հազարանուն, արեգակի հրով վառված՝
  Դեպի Արև՜ն էին գնում ամբոխները խելագարված…(Եղ. Չ.):

Մաս 2-րդ՝

Արծվի անմահությունը

Բանալի բառեր՝

ակնթարթի հրաշք, ջուր, նոր կյանք, երիտասարդ, ճակատագիր, ապրելու բուռն ցանկություն, կյանքի հավերժական ընթացք :

Հարցեր՝

1. Ի՞նչ արեց արծիվը նորից երիտասարդ և ուժեղ լինելու համար:
2. Ինչու՞ չէր ցանկանում մեռնել բնում:
3. Ի՞նչ խորհուրդ ունի ջուրը:
4. Ու՞ր էր տանում արծվին վերջին խիզախումը:

Ամբողջ կյանքում վեհ ու խիզախ ապրած արծվի կյանքի վերջին րոպեներն էլ պիտի լինեին այդպիսին։

Երկինքն էր իրենը, արևն էր իրենը, ազատությունն ու տիեզերաձավալ թռիչքն էր իրենը,ուստի նա պիտի մեռներ թռիչքի մեջ, երբ իրեն զգում էր երջանիկ, հզոր ու ամենակարող:

Հարցին , թե ինչու արծիվը չէր ցանկանում մեռնել բնում, լիարժեք պատասխան ստանալու համար աշակերտներին կարելի է հիշեցնել Հ. Սահյանի <<Պապը>> բանաստեղծությունը, հանձնարարել համեմատել և քննարկել:

- …Եվ պապը ակոսում

  Պառկել ու քնել է,

  Խառնվել այն հողին,

  Որ իրեն սնել է…(Հ. Ս.):

Այս գաղափարն է դրված նաև Ստ Զորյանի <<Պապն ու թռռը>> պատմվածքում:

Եփրեմ պապը՝ զգալով, որ ապրում է իր կյանքի վերջին րոպեները, դուրս է գալիս տնից ու խնդրում թոռնուհուն՝ Աստղիկին, իրեն տանել <<բաղը>>:

<<. . . Երկար համբուրում էր նա կանաչով ծածկված հողը, և անզուսպ արցունքներն առատորեն թափվում էին նրա աչքերից. . . Մի փոքր էլ, և նա ուժասպառ ընկավ կակաչների վրա. . . >>:

Չվախենալով մահից՝ արծիվը ցանկանում է ընկնել ծովի խորխորատը՝ ջրի մեջ՝ մաքրագործվելու , ապա վերածնվելու՝ երիտասարդ և ուժեղ:

Այո՛, ջրու՛մ պիտի կատարվեր այդ հրաշքը, քանզի **ջուրը կյանքի սկիզբն է ու կյանքի աղբյուրը:**Հիշենք մեր էպոսի հերոսներին, ովքեր ջրի ծնունդ էին։

Մաս 3-րդ՝

Արժանի հետնորդներ

Բանալի բառեր՝

անմահություն,վերածնունդ, արծիվների ճակատագիր, հրաժեշտի շրջան, բազում սերունդներ, խորհրդավոր սերնդափոխություն, արժանի հետնորդներ:

Հարցեր՝

1. Ի՞նչ եք հասկանում՝ անմահություն, վերածնունդ ասելով:
2. Ինչպիսի՞ ճակատագիր ունեցան <<մերօրյա արծիվները>>:
3. Կարո՞ղ եք արծվի թռիչք կատարել և սլանալ դեպի արևը:
4. Կդառնա՞ն արդյոք զավակները իրենց հորն արժանի հետնորդներ:

Իրենց հոր՝ հրաժեշտի հպարտ ճախրանքին հետևող զավակները հասկանում էին, որ նրան արժանի հետնորդներ պիտի լինեն: Չէ՞որ անմահությունն ու հավերժությունը, նաև վերածնվելն ու ապրելն է քո զավակների մեջ, քեզ նման, քեզ հետևող, քո պատգամը սրբորեն պահող ու զարգացնող հետևորդների մեջ:

Ովքե՞ր են <<մերօրյա արծիվները>> հարցին,աշակերտները միաբերան արձագանքեցին. <<Մեր հայ զինվորնե՛րն են, ովքեր անմահացան>>:

Իսկ մի՞թե նման արծիվները դադարում են թռչել՝ ո՛չ. եղավ կտրուկ պատասխան: Նրանք մեզ հետ են, նրանք մեր մեջ են, նրանք հավերժ կմնան մեր սրտերում: Նրանք իրենց պարզ ու խորունկ հայացքներով հիմա երկնքից նայում են մեզ և իրենց ընտանիքի անդամներին, ովքեր մինչև հիմա չեն համակերպվում անդառնալի կորստի հետ: Անմահության գաղափարը քննարկելիս չենք կարող չհիշել թումանյանական բանաձևումը.

- Գործն է անմահ, լա՛վ իմացեք,
  Որ խոսվում է դարեդար,
  Երնեկ նըրան, ով իր գործով
  Կապրի անվերջ, անդադար(Հովհ. Թ.):

Այս բազմաճյուղ ու խորաշերտ քննարկումից հետո դասը կարելի է ավարտել՝ կիրառելով <<Քառաբաժան>>մեթոդը.

Ի՞նչ տեսա	Ի՞նչ զգացի
Ի՞նչ լսեցի	Ի՞նչ հասկացա

Հպարտ արծվին նայելիս արդեն պատկերացնում ես նրա հզոր ուժը …

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Լեոնարդո դա Վինչի <<Արծվի պատգամը>>
2. Ս. Կապուտիկյան<< Տղայիս>>
3. Պ. Սևակ<<Որդուս>>
4. Հովհ. Շիրազ<<Կյանքից թանկ բանը>>
5. Ավ. Իսահակյան <<Աբու -Լալա Մահարի>>
6. Եղ. Չարենցի <<Ամբոխները խելագարված>>
7. Հ. Սահյան<<Պապը>>
8. Ստ. Զորյանի <<Պապն ու թոռը>>

9. Հովհաննես Թումանյան «Թմբկաբերդի առումը»